

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՈՒԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջին տասն և հինգ տարիների ընթացքում հրատարակվել են երկու թարգմանչական բառարաններ: Առաջինը՝ երկհատոր «Ռուս-հայերեն նոր բառարան» է (1933 և 1935 թ. թ.), 80000 բառ և արտահայտություն, և երկրորդը՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատարակած «Ռուս-հայերեն բառարան»-ը (1945 թ.), 28000 բառով:

Ինչպես վերը նշվածները, այնպես էլ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ը, չեն տալիս աստղագիտական մի շարք հարցերի ճշգրիտ և լրիվ թարգմանությունն ու բացատրությունները: Կան և մի շարք առավել գործածական բառեր, որոնք տերմինաբանական հանձնաժողովների միջոցով չեն ճշգրտվել, որի հետևանքով ոչ միայն տարբեր բառարաններում տարբեր սկզբունքով են թարգմանվել ու բացատրվել, այլև հաճախ նույն բառարանում տարբեր բացատրությամբ են տրվել:

Տերմինաբանական ճշգրտման կարոտ աստղագիտական կարևորագույն հարցերից են հետևյալները: Ամենուրեք բառարաններում կարգում ենք — արև և արեգակ, լուսին և լուսնյակ, երկիր և երկրագունդ, ծիր-կաթին և հարդագողի ճանապարհ բառերը, որպես հասարակ անուններ (փոքրատառով են սկսվում): Ծիրտ է, այդ անունները, առանձնապես արևը, երկիրը, բազմազան նշանակություն են ստացել, բայց որտեղ և ինչ ձևով պետք է իմանալ, որ դրանցից մեկն ու մեկը վերաբերում է մեր աստղին (Արևին), մեր մոլորակին (Երկրին), մեր արբանյակին (Լուսնին) և, վերջապես, մեր Գալակտիկային (Միր-կաթին): Իհարկե, Գալակտիկա բառը ոչ մի բառարանում չկա: Այդպիսի անորոշության պատճառով, հաճախ նույնիսկ միևնույն աստղագիտական գրքում կամ հոդվածում վերը նշված անուններից կամայականորեն մեկը հատուկ անուն է համարվում, իսկ մյուսը ոչ, իսկ մի այլ տեղ ընդհակառակը: Լինում են և դեպքեր, որ բոլորն էլ հատուկ անուն են համարվում և կամ, ընդհակառակը, հասարակ:

Տերմինաբանական հարց է և այն, որ բառարաններում աստղագուշակությունն ու աստղագիտությունը նույնացվում է: Աստղագուշակությունը մի կեղծ գիտություն է, իսկ աստղագիտությունն ու աստղաբաշխությունը ամենաճշգրիտ գիտությունների թվին են պատկանում: Բառարաններում սխալ է և այն, որ հին անցյալը համարվում է աստղագիտություն, իսկ նորը՝ աստղաբաշխություն: Անցյալում մարդիկ, իրավ, զբաղվում էին նրանով, թե աստղերն ինչպես են տեղաբաշխված երկնքում և ուրիշ ոչինչ, որն իսկապես աստղաբաշխությունն է: Իսկ նորը, որը լայն ճյուղավորված աստղային գիտությունների մի խումբ է, պետք է անվանել աստղագիտություն:

Բառարաններն ու նորագույն աստղագիտական հրատարակություններն իրար հետ համաձայնեցված չեն. ինչպես պետք է անվանել Երկրի շարժման հետագիծը (օրբիտան): Բառարաններում կարգում ենք «էկլիպտիկ»

կա, արեգածիր, արեգակնածիր, արևուդի, իսկ գրականության մեջ հաճախ միայն չխափարածիրք և ուրիշ ոչինչ:

Հարցերի հաջորդ խումբը վերաբերում է մոլորակներին, հատուկ անուն ունեցող աստղերին և համաստեղություններին:

Վերը նշված բառարաններից դժվար է իմանալ, թե հեղինակներն ինչ սկզբունքով են առաջնորդվել: Առաջին բառարանում (1933 և 1935 թ. թ.) քմահաճ կերպով Սատուրն մոլորակի անունը բաց է թողնված, իսկ Պլուտոն մոլորակի անունն էլ աչ նույն իմաստով է գործածված—«Դից-Պլուտոն»: Մնացած մոլորակների անուններն էլ այսպես են գրված—«Մերկուրի» — Փայլածու (մոլորակ): «Վեներա», Արուսյակ» և ուրիշ ոչինչ: «Մարս», Հրաա (մոլորակ): «Յուպիտեր» — աստղ Լուսնթագ: «Ուրան» — Աստղ. Ուրանոս (մոլորակ): «Նեպտուն» (մոլորակի անուն): և այլն: Մի մոլորակի անվան մոտ գրված է «(մոլորակ): մյուսում՝ «աստղ», երրորդում՝ երկուսն էլ, իսկ չորրորդում՝ ոչինչ: Երկրորդ բառարանում (1945 թ.) կա միմիայն Վեներայի անունը և ուրիշ ոչինչ:

Հայտնի է, որ կան ընդամենը երկու երեք տասնյակ աստղեր, որոնք հատուկ անուն ունեն (ամենապայծառ աստղերը): Ալդերարան, Անտարես, Արկտուր, Կապելլա, Վեգա և այլն (մնացած աստղերը համարներով են): Առաջին բառարանում կա միայն Սիրիուսի անունը, իսկ երկրորդում՝ ոչ մեկը:

Ինչ վերաբերում է համաստեղություններին, այստեղ ես ոչ մի սկզբունք չի պահպանված: 88 համաստեղությունից միայն մի մասը կա: Եղածները ոչ ընդգրկել են գլխավոր համաստեղությունները և ոչ էլ միայն Հյուսիսային կիսագնդի կամ գոդիակային համաստեղությունները: Եղածների մի մասի մոտ գրված է և՛ «աստղ» և «համաստեղություն» (Ճուլ, Օրիոն և այլն): Մի մասի մոտ նշված է միայն «համաստեղություն» (Մեծ Արջ և այլն): Դա ամբողջը չէ, եղածների մի մասի անունները համարվել են հատուկ անուններ և գրվել են մեծատառով, իսկ մի մասն էլ որպես հասարակ անուններ փոքրատառով (քնար, ջրհոս և այլն): Սա առաջին բառարանումն է, իսկ երկրորդում կա միայն «ջրհոս» և նշելով, որ «աստղ» է:

Բոլորովին անհասկանալի է մնում, թե ինչու Սատուրն մոլորակի անունը բաց է թողնվել և կամ ինչու է ցույց տրված միայն մեկ աստղի և կամ մեկ համաստեղության անունը: Կան և մի շարք այլ հարցեր, որոնց մենք ամբողջությամբ մեկ հոդվածում ընդգրկել չենք կարող:

Մեր նպատակը չէ ուղացած գրախոսական դրել, այլ ժամանակին ահադանդել, որպեսզի հետազայում, մանավանդ լիակատար բառարան կադմելիս նկատի առնվի նախ՝ տերմինների ճշգրտման, որպիսով որոշ սկզբունք պահպանելու կարևորությունը, և ոչ թե խառնաշփոթ ձևով տրվի մեկական աստղի, մոլորակի և համաստեղության անուն, և կամ մի մասը դարձվի հատուկ, իսկ մյուսը հասարակ անուն: Երա հետ միասին պետք է պահպանել և միասնական ձև, կամ բոլորի համար դրել և՛ «աստղ» և՛ նրանց մոլորակ, աստղ, համաստեղություն լինելը և կամ դրանցից մեկն ու մեկը:

Պ. ԿԵՎՈՐԳՅԱՆ

